

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարության և Բելառուսի Հանրապետության կրթության նախարարության միջև կրթության բնագավառում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը և Բելառուսի Հանրապետության կրթության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով հայ և բելառուս ժողովուրդների բարեկամության պատմական արմատների վրա,

գիտակցելով փոխադարձ շահագրգռվածությունը իրավահավասար համագործակցության մեջ և ձգտելով խրախուսել ու զարգացնել փոխշահավետ համագործակցությունը կրթության և գիտության բնագավառում,

ընդունելով իրենց փոխհարաբերություններում և հանրակրթական քաղաքականության մեջ համամարդկային արժեքների գերակայությունը,

դիտելով պետական-կրթական և գիտական կառույցները որպես ամբողջական համակարգ, որոնք նպաստում են երկու պետությունների քաղաքացիների լիարժեք զարգացմանը՝ անկախ էթնիկական պատկանելությունից, քաղաքական և կրոնական հայացքներից ու համոզմունքներից,

արտահայտելով պատրաստակամություն գիտական, կազմակերպչական-մեթոդական և տեղեկատվական համագործակցության,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, յուրաքանչյուր պետության գործող օրենսդրությանը և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, իրավահավասարության ու փոխադարձ հարգանքի սկզբունքների հիման վրա կզարգացնեն և կխրախուսեն երկու պետությունների համապատասխան կազմակերպությունների և հաստատությունների համագործակցությունը:

Հոդված 2

Կողմերն իրենց ջանքերը կկենտրոնացնեն համագործակցության հետևյալ ուղղությունների վրա՝

- փորձի փոխանակում կրթության զարգացման, կառավարման և պլանավորման կարևորագույն ուղղությունների բնագավառներում, ներառյալ բարձրագույն և հետբուհական կրթությունը,

- համարժեք փոխանակման հիման վրա յուրաքանչյուր Կողմի համար գերակա մասնագիտությունների գծով ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և փորձնակների պատրաստում այն մասնագիտություններով, որոնք առաջնային են յուրաքանչյուր Կողմի համար,

- գիտամանկավարժական և կառավարչական կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում,

- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հետազոտությունների համատեղ անցկացում բնական, տեխնիկական, մանկավարժական, հումանիտար գիտությունների բնագավառներում, այդ թվում՝ երկու ժողովուրդների պատմական անցյալին առնչվող հարցերի շուրջ,

- կարծիքների փոխանակում ուսումնական ծրագրերի և պատմության, աշխարհագրության ու գրականության դասագրքերի բովանդակության վերաբերյալ,

- կրթության զարգացման սկզբունքային հարցերի շուրջ համաձայնեցված դիրքորոշման մշակում,

- կրթության համակարգի ստեղծագործական և մտավոր ներուժի արդյունավետ օգտագործում:

Հոդված 3

Կողմերն իրենց տարածքներում երաշխավորում են երկու պետություններում մինչև 1992 թվականի հունվարի 1-ը տրված կրթության վերաբերյալ փաստաթղթերի անժամկետ ճանաչումը:

Հոդված 4

Կողմերը պայմանավորվել են անհրաժեշտ աշխատանք տանել 1992 թվականի հունվարի 1-ից հետո երկու պետությունների ուսումնական հաստատությունների կողմից տրված կրթության մասին փաստաթղթերի փոխադարձաբար ճանաչման հարցերի կարգավորման ուղղությամբ:

Հոդված 5

Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում բելառուսական գրականության, Բելառուսի Հանրապետության պատմության ու աշխարհագրության և Բելառուսի

Հանրապետությունում հայ գրականության, Հայաստանի Հանրապետության պատմության ու աշխարհագրության ուսումնասիրմանը:

Հոդված 6

Կողմերը կնպաստեն հայերենի և բելառուսերենի ուսումնասիրության ամենամյա ամառային դասընթացների անցկացմանը, որոնք անհրաժեշտության դեպքում կկազմակերպվեն համալսարանների կողմից՝ Հայաստանի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետությունում, անվճար համարժեք փոխանակման կամ ուղարկող Կողմի հաշվին:

Հոդված 7

Կողմերը կարող են սահմանել պետական ընդունելության չափաքանակներ Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների՝ Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար: Ուսման վարձի վճարումը կիրականացվի ուղարկող Կողմի հաշվին: Ընտրության, ընդունելության և ֆինանսավորման կարգը կորոշվի առանձին արձանագրություններով:

Հոդված 8

Կողմերից յուրաքանչյուրը չի առարկում մյուս Կողմի քաղաքացիների՝ մրցութային հիմունքներով անհատական ընդունելությանը իր ուսումնական հաստատություններ՝ գործող կանոնների համաձայն, հետագա ուսուցումը կազմակերպելով փոխհատուցման հիմքերի վրա:

Հոդված 9

Կողմերից յուրաքանչյուրը կնպաստի մյուս Կողմի պետության քաղաքացիների որակավորման բարձրացմանը ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում՝ փոխհատուցման հիմքերի վրա:

Հոդված 10

Կողմերը կծգտեն ընդլայնել իրենց գիտնականների համատեղ մասնակցությունը կրթության բնագավառում միջազգային ծրագրերին

ու նախագծերին, հումանիտար գիտությունների գծով սեմինարներին, խորհրդատուականներին, ընթերցումներին և այլ միջոցառումներին:

Հոդված 11

Կողմերը միջազգային համագործակցության բնագավառում կփոխանակեն տեղեկատվություն, որը կարող է հետաքրքրել մյուս Կողմին, կնպաստեն միջազգային ծրագրերին և նախագծերին համատեղ մասնակցելու համար մասնագետների խմբերի ստեղծմանը:

Հոդված 12

Կողմերը կզարգացնեն ուսումնամեթոդական, գիտական փորձի և նյութերի փոխանակումը, կակտիվացնեն համագործակցությունը կրթության որակի կառավարման բնագավառում:

Հոդված 13

Կողմերը կնպաստեն Կողմերի պետությունների բոլոր մակարդակների կրթական հաստատությունների միջև ուղիղ կապերի զարգացմանը, գիտության և կրթության ներկայացուցիչների անձնական հաղորդակցման ամրապնդմանը:

Հոդված 14

Կողմերը կնպաստեն բարձրագույն ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատանքի գծով հումանիտար, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառների մասնագետների փոխանակմանը, Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության արդյունավետության բարձրացմանը:

Հոդված 15

Կողմերը կնպաստեն միջնակարգ հանրակրթական դպրոցների, մասնագիտական տեխնիկական ուսումնարանների, միջնակարգ հատուկ ուսումնական հաստատությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության զարգացմանն ու ամրապնդմանը հետևյալ ուղղություններով՝

- փորձի փոխանակում մանկավարժական գործունեության բնագավառում,

- ուսումնական ձեռնարկների ու ծրագրերի, ուսումնական գործընթացում համակարգչային ծրագրերի մշակման փորձի փոխանակում,

- գիտական տեղեկատվության փոխանակում,

- համատեղ ուսումնական ծրագրերի մշակում,

- սպորտային պատվիրակությունների և գեղարվեստական ինքնագործ կոլեկտիվների փոխանակում,

- ստեղծագործական մրցույթների և առարկայական օլիմպիադաների անցկացման ընթացքում հաղորդակցման ընդլայնում,

- փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համատեղ գիտահետազոտական աշխատանքների կատարում:

Սույն հոդվածի շրջանակներում փոխանակությունը կկատարվի պայմանագրային հիմունքներով:

Հոդված 16

Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծմանը Բելառուսի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծմանը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև այդպիսի համատեղ ուսումնական հաստատությունների ստեղծմանը:

Հոդված 17

Կողմերը կաջակցեն Հայաստանի Հանրապետության ազգությամբ բելառուս քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության ազգությամբ հայ քաղաքացիների իրավունքների ապահովմանը կրթության բնագավառում:

Հոդված 18

Կողմերից յուրաքանչյուրը, ազգային օրենսդրությանը համաձայն, իր պետության տարածքում մշտապես բնակվող մյուս պետության քաղաքացիների համար կրթության բնագավառում երաշխավորում է իր քաղաքացիներին հավասար իրավունքներ:

Հոդված 19

Կողմերն անհրաժեշտության դեպքում պատվիրակություններ կփոխանակեն կապերի ամրապնդման, աշխատանքի փորձի փոխանակման, համագործակցության հետագա զարգացման հարցերի քննարկման, ինչպես նաև սույն Համաձայնագրի իրականացման հետ կապված խորհրդակցությունների անցկացման համար:

Պատվիրակությունների տրանսպորտային ծախսերը կատարվում են ուղարկող Կողմի հաշվին: Պատվիրակությունների կեցության ապահովման ծախսերը կատարվում են ընդունող Կողմի հաշվին:

Հոդված 20

Կողմերը փոխադարձ համաձայնությամբ կարող են ստեղծել խառը հանձնաժողով սույն Համաձայնագրի իրականացման և Կողմերի բեղմնավոր փոխգործակցությանն ուղղված երաշխավորությունների պատրաստման համար:

Հոդված 21

Սույն Համաձայնագիրը Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ կարող է փոփոխվել և լրացվել:

Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 22-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և կիրարկման վերաբերյալ տարաձայնությունները Կողմերը կլուծեն բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 22

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով գործընթացների ավարտման մասին դիվանագիտական խողովակներով միմյանց տեղեկացնելու օրվանից և գործում է հինգ տարվա ընթացքում:

Համաձայնագրի գործողությունն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակաշրջանով, եթե Կողմերից ոչ մեկը ժամկետի ավարտից վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի տեղեկացնում Համաձայնագիրը չեղյալ հայտարարելու իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի դադարեցումը կամ որևէ փոփոխություն չի ազդի սույն Համաձայնագրի գործողության

Ժամանակահատվածում սկսված և մինչև Համաձայնագրի գործողության դադարեցման կամ նման փոփոխությունների ուժի մեջ մտնելու պահը չավարտված նախագծերի իրագործման վրա:

Կատարված է Երևան քաղաքում 2001 թվականի մայիսի 26-ին՝ երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման տարակարծության դեպքում գերադասելի է համարվում ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի դեկտեմբերի 26-ից: